

ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ
ՀՀ ԱՐՏԱԿԱՐԳ ԻՐԱՎԻՃԱԿՆԵՐԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ
ՃԳՆԱԺԱՄԱՅԻՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԱԿԱԴԵՄԻԱՅԻ
2013Թ. ԿԱՏԱՐՎԱԾ ԱՇԽԱՏԱՆՔՆԵՐԻ

Հաշվետու ժամանակում ակադեմիայում իրականացվել են աշխատանքներ հետևյալ ուղղություններով՝

- ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.
- բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.
- բնակչության ուսուցում.
- գիտամեթոդական աշխատանքների կատարում.
- միջազգային համագործակցություն.
- լրացուցիչ աշխատանքներ:

1. Ղեկավար կազմի և մասնագետների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2013 թ. ակադեմիայում վերապատրաստման և որակավորման բարձրացման դասընթացներ են անցել 1883 ունկնդիր (պլանով՝ 1775) 83 ուսումնական խմբերում (պլանով՝ 83 խումբ):

Հաշվետու ժամանակաշրջանում՝

- ՀՀ նախարարություններից և գերատեսչություններից ուսուցում է անցել 537 ունկնդիր.
- ՀՀ մարզերից ուսուցում է անցել 357 ունկնդիր.
- Երևանի քաղաքապետարանից և Երևան քաղաքի վարչական շրջաններից ուսուցում է անցել 989 ունկնդիր:

2. Հրշեջ-փրկարարների վերապատրաստում, որակավորման բարձրացում.

2013 թ.-ի դասընթացների գրաֆիկի համաձայն, կազմակերպվել և անցկացվել են հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման հետևյալ դասընթացները`

- «ՀՓՁ-ի խմբի պետերի վերապատրաստման» դասընթաց (80 ժամ, 13 մասնակից),
- «ՀՓՁ-ի հերթափոխի պետերի վերապատրաստման» դասընթաց (80 ժամ, 14 մասնակից):
- «Սկզբնական հրշեջ-փրկարարական պատրաստության» դասընթաց (240 ժամ, 14 մասնակից),
- «ՀՓՁ-ի հրամանատարների տեղակալների և ԵՓՎ բաժինների հրդեհաշիջման գծով ավագ հրահանգիչների վերապատրաստման» դասընթաց (40 ժամ, 15 մասնակից),
- ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ ՀՆՓԱԻԿ-ի փրկարարների «Սկզբնական փրկարարական պատրաստության» դասընթաց (240 ժամ, 13 մասնակից):
- «Զրափրկարար-ջրասուզակների վերապատրաստման» դասընթաց (80 ժամ, 13 մասնակից),
- «ՀՓՁ-ների ռազմական հրամանատարների վերապատրաստման» դասընթաց (80 ժամ, 15 մասնակից),
- «Հրշեջ փրկարարների վերապատրաստման» (3-րդ կարգ) դասընթաց (240 ժամ, 15 մասնակից),
- «Սկզբնական հրշեջ-փրկարարական պատրաստության» դասընթաց (240 ժամ, 12 մասնակից):

2013 թ.-ի դասընթացների գրաֆիկով նախատեսված «Փրկարարների վերապատրաստման» (3-րդ կարգ) դասընթացը օբյեկտիվ պատճառներով տեղի չի ունեցել:

ՓԾ ծառայողների 2013 թ.-ի դասընթացների գրաֆիկի համաձայն, հաշվետու տարվա ընթացքում դասընթացներին և առարկայական քննություններին մասնակցել են 124 ՓԾ ծառայողներ, պլանավորված 155- ի փոխարեն:

Սակայն հաշվետու ժամանակահատվածում ակադեմիայի փրկարարական ֆակուլտետում չպլանավորված դասընթացներին և առարկայական քննություններին մասնակցել է 152 ունկնդիր`

- Ի կատարումն ՓԾ տնօրենի 22.01.2013 թ. N44-Ա հրամանի կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ԱԻՆ ՓԾ ՓՈՒՎ «ՀԱԷԿ» պահպանության հատուկ հրշեջ ջոկատի անձնակազմի «Հակածխային ծառայության հրահանգիչների պատրաստման» դասընթաց (30 ժամ, 5 մասնակից):
- Մարտի 25-ից մինչև 29-ը իրականացվել է Հարավ Կովկասյան երկաթուղու երկաթուղային աշխատակիցների «Հրդեհային անվտանգության պահանջների ուսուցման» դասընթաց (50 ժամ, 13 մասնակից):

- Ապրիլի 15-ից 19-ը իրականացվել է «Կոկա-Կոլա Յեյլենիկ Բոթլինգ Քամփնի Արմենիա» ՓԲԸ աշխատակիցների «Հակահրդեհային պատրաստության» դասընթաց (24 ժամ, 16 մասնակից):
- Ի կատարումն էր ՀՀ ԱԻՆ ՓԾ տնօրենի 06.12.2012թ. N17/1343 հրամանի ս.թ մայիսի 20-ից կազմակերպվել և անցկացվել է պարանային փրկարարական աշխատանքների ուսուցման դասընթացներ ՀՀ ԱԻՆ ԵՓՎ N11 և N9 հրշեջ-փրկարարական ջոկատների անձնակազմի հետ (69 մասնակից):
- Ի կատարումն էր ՀՀ ԱԻՆ նախարարի 14.02.2013թ. N 127-Ա հրամանի իրականացվել է «INSARAG» մեթոդով և պահանջներին համապատասխան «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում անձնակազմի ուսուցում (16-22-ը 02.2013թ.) Երևանում՝ ակադեմիայում (23 մասնակից), (25-ից 26-ը 02.2013թ.) ՀՀ Սյունիքի (14 մասնակից) և (28.02.2013թ-ից 01.03.2013թ.) Շիրակի մարզերում (12 մասնակից), ընդամենը 49 մասնակից:

Բացի այդ կազմակերպվել և անցկացվել է ՀՀ ԱԻՆ փրկարար ծառայությունում ծառայության անցնողների եռամսյա ուսումնական փորձաշրջան անցնողների ստուգարքները: 441 մասնակից, որից փորձաշրջանն ավարտել են 257-ը, փորձաշրջանում են գտնվում 143-ը, 57-ը հեռացվել են:

Այսպիսով **2013թ.-ին հրշեջ-փրկարարների վերապատրաստման և որակավորման բարձրացման ուղղությամբ իրականացվել է 257 հոգու եռամսյա ուսումնական փորձաշրջան և գրաֆիկով նախատեսված 155 ունկնդրի փոխարեն իրականացվել է դասընթաց 276 ունկնդրի համար, որից՝**

- գրաֆիկով նախատեսված դասընթաց- 124 ունկնդիր,
- գրաֆիկով չնախատեսված դասընթաց - 152 ունկնդիր:

3. Բարձրագույն և միջին մասնագիտական կրթական ծրագրերով մասնագետների պատրաստում.

Ուսանողների թիվը	Բակալավրիատ		Մագիստրատուրա		Միջին մասնագիտական
	առկա	հեռակա	առկա	հեռակա	
Ընդունվել է՝	71, որից 44-ը՝ անվճար	103	14	29	46
Ավարտել է՝ 210	53	114	1	21	21
վերականգնված	35	79	2	1	2
ազատված /ազգային բանակ	25	32	-	-	2

ազատված /այլ պատճառով	17	92	3	7	12
ԸՆԴԱՄԵՆԸ Ուսանողների թիվը 12.12.2013 թ. դրությամբ	221, որից 69-ը անվճար	715	23	51	124

4. Բնակչության ուսուցում.

Բնակչության ուսուցման ուղղությամբ կատարվել են հետևյալ աշխատանքները.

- արտակարգ իրավիճակներից բնակչության պաշտպանության հարցերով ուսուցողական տեսանյութերի հավաքում, մոնտաժում (132 ժամ ընդհանուր տևողությամբ) և ցուցադրում դաստիարակների և ուսուցիչների վերապատրաստման դասընթացներում.
- 0,5 ժամ, 1 ժամ և 2 ժամ տևողությամբ տեսասկավառակների հանձնում 183 հանրակրթական դպրոցների և նախադպրոցական հաստատությունների.

22 մանկապարտեզների հանձնվել են «Ես կարող եմ» և «ԱՌՆ կրթություն» ձեռնարկներ, 20 հանրակրթական դպրոցների (3-րդ դասարանի դասվարների համար)՝ «ԱՌՆ կրթություն» ձեռնարկներ:

5. Գիտամեթոդական աշխատանքների կատարում.

Հաշվետու ժամանակահատվածում՝

- Հրատարակվել են 13 ուսումնական և ուսումնամեթոդական աշխատանք, 36 գիտական հոդված, «Ճգնաժամային կառավարում և տեխնոլոգիաներ» գիտական և գիտամեթոդական հոդվածների ժողովածուի երկու համարներ, «Ճգնաժամ հաղթահարողներ» ուսանողական թերթը:
- Ներկայացվել են 7 զեկուցումներ միջազգային գիտական, գիտագործնական խորհրդակցություններում և խորհրդաժողովներում.
- Վ. Բրյուսովի անվան Երևանի պետական լեզվաբանական համալսարանում կազմակերպված միջբուհական գիտաժողովում դասախոսների կողմից ներկայացվել է 2 գիտական զեկուցում.
- ղեկավարվել է 22 մագիստրոսական ատենախոսություն:

6. Միջազգային համագործակցություն.

ԱՌՆԱՊ-ի շրջանակներում շարունակվել է համագործակցությունը ՄԱԿ–ի զարգացման ծրագրի, ՄԱԿ-ի մանկական հիմնադրամի, հետ, ինչպես նաև Oxfam, Save the Children միջազգային կազմակերպությունների հետ:

Ի կատարումն ՀՀ ԱԻ նախարարի համապատասխան հրամանների ակադեմիայի դասախոսները մասնակցել են՝

- Նիդեռլանդների թագավորությունում (Հաագա քաղաքում) INSARAG-ի կողմից կազմակերպված աքղաքային որոնողափրկարարական թիմի ղեկավարների տարեկան հանդիպմանը.
- Ալմաթայում կազմակերպված Կենտրոնական Ասիայի և Հարավային Կովկասի տարածաշրջանային գործընկերության ուսուցման համաժողովին.
- Բելգիայի թագավորությունում (Բրյուսել) GDACS տարեկան հանդիպմանը:

7. Լրացուցիչ աշխատանքներ.

- Հաշվետու ժամանակահատվածում ակադեմիայի դասախոսները մասնակցել են՝
- ՀՀ ԱԻՆ ՓԾ օպերատիվ կառավարման վարչության ճգնաժամային կառավարման կենտրոնի անձնակազմի ուսուցման, վերապատրաստման և որակավորման գործընթացների կազմակերպմանն ու անցկացմանը (Մշակվել է ուսումնական մոդուլների համապատասխան ծրագրեր ու ներկայացվել աշխատանքային խմբին և շվեյցարական փորձագետների տեխնիկական խմբի քննարկմանը և դրանցով անցկացվել դասընթաց).
- Հ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում «Արձագանք բուժմիավորումներ» ծրագրի մեկնարկն ապահովող աշխատանքներին.
- ԱԻ արդյունավետ արձագանքման համար ՀՀ ԱԻՆ ՓԾ կարողությունների, հնարավորությունների գնահատման, կարիքների ճշգրտման աշխատանքային խմբի աշխատանքներին.
- ՀՀ Սյունիքի և ՀՀ Գեղարքունիքի մարզերում բժշկաքույրական բրիգադների հրահանգիչների և Միջազգային որոնողական խորհրդատվական խմբի մեթոդաբանության չափորոշիչներին համապատասխանեցված հրշեջ-փրկարարների դասընթացները կազմակերպելու և անցկացնելու աշխատանքներին.
- ՀՀ ԱԻՆ ՃԿՊԱ 2012-2013 ուսումնական տարվա ամփոփիչ պետական ատեստավորման գործընթացին.
- Հայաստանի Հանրապետությունում բնակվող Ֆրանսահպատակ քաղաքացիների արտակարգ իրավիճակներից պաշտպանության պլանի մշակման և նրանց հետ իրականացվելիք ուսուցման ու վարժանքների աշխատանքային խմբի աշխատանքներին.
- «Հարավկովկասյան Երկաթուղի» ՓԲԸ-ն հրշեջ-փրկարարական ջոկատի հագեցվածության ստուգման և որակավորման նպատակով փրկարարներից քննության ընդունման կազմակերպման և անցկացման աշխատանքներին:

- «Դինո Գոլդ Մայնինգ» ՓԲԸ հագեցվածության ստուգման և որակավորման նպատակով «Արագ արձագանքման խմբի» փրկարարներից քննության ընդունման կազմակերպման և անցկացման աշխատանքներին.
- փրկարարների փրկարարական որակավորման նորմատիվային պահանջների մշակմանը.
- Շվեդարական միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցության շրջանակներում իրականացված «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում կազմակերպված «Տեխնիկական որոնում» դասընթացներին.
- ԼՂՀ տարածքում «Ուժեղ երկրաշարժի դեպքում բնակչության պաշտպանության միջոցառումների կազմակերպում» թեմայով համատեղ անցկացվող հրամանատարաշտաբային ուսումնավարժության նախապատրաստման աշխատանքներին.
- ՀՀ ՉՈՒ հաստիքային հրշեջ խմբերի հրշեջ-կիրառական մարզաձևի մրցումների անցկացմանը և մրցավարական աշխատանքների պատշաճ իրականացմանը.
- «Բաղրամյան» զորավարժարանում «Արձագանք 2013» նշանաբանով ռազմավարական հրամանատարաշտաբային մարզումների ընթացքում անցկացվող վարժանքի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին.
- Լեհաստանի Հանրապետության ազգային հրդեհային ծառայության ներկայացուցիչների հետ կայացած միջոցառմանը.
- Լեռնային Ղարաբաղի Հանրապետությունում կայացած «Լեռնային Ղարաբաղի Հանրապետության Շուշիի շրջանում ուժեղ երկրաշարժի հետևանքների վերացման ժամանակ փրկարարական և անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքների կազմակերպումը և իրականացումը» թեմայով համատեղ հրամանատարաշտաբային ուսումնավարժությանը.
- Շվեդարական միջազգային զարգացման և համագործակցության գործակալության հետ համագործակցության շրջանակներում իրականացված «Տարածքային արագ արձագանքման թիմերի ստեղծում» ծրագրի շրջանակներում կազմակերպված տեխնիկական ուսուցմանը:

Իրականացրել է Լուսակերտ ուսումնական բազայում ուսուցողական վագոնների տեղափոխման, տեղակայման, բարձրավոլտ երեք հենասյունների ապամոնտաժման և տեղափոխման աշխատանքներ:

Ակադեմիայի աշխատակիցները մասնակցել են «Որակի ներքին ապահովումը ՀՀ մասնագիտական կրթության ոլորտում. Որակի արտաքին և ներքին ապահովման համակարգերի մշակում և բարելավում» թեմայով վերապատրաստումների երեք փուլ համաժողովներին, «Անցումային ժամանակաշրջանի մարտահրավերները ՀՀ մասնագիտական կրթության որակի ապահովման համակարգում» ֆորումներին, քննարկումներին, ներկայացրել առաջարկություն կապված ««ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ»-ի մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները» փաստաթղթի հետ,

կատարել ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաօլորտների:

Ակադեմիայի ուսանողները մասնակցել են սեպտեմբերի 4-ի փրկարարի օրվան նվիրված շքերթին (30 հոգի), հոկտեմբերի 9-ի «Բաղրամյան» զորավարժարանում «Արձագանք 2013» նշանաբանով ռազմավարական հրամանատարաշտաբային մարզումների ընթացքում անցկացվող վարժանքի նախապատրաստման և անցկացման աշխատանքներին որպես տուժած (14 հոգի) և մի խումբ ուսանողներ մասնակցել են «Աջակցություն արտադրական անվտանգության վերաբերյալ գիտելիքների հարստացմանը բարձրագույն ուսումնական հաստատություններում» ծրագրի շրջանակներում ամփոփիչ հանդիպմանը, որը կազմակերպվել էր «Էկոլոգիան հանուն խաղաղ գոյակցման» գիտական, Էկոլոգիական հասարակական կազմակերպության կողմից:

ՀՀ կրթության և գիտության նախարարության մանկապատանեկան հանրապետական կենտրոնի Երևան քաղաքի «Յետիոտն տուրիզմ և հայրենագիտական դաստիարակչություն» գարնանային թիմային առաջնությանը մասնակցել է ակադեմիայի միջին մասնագիտական կրթական ծրագրով սովորողների «Պատանի փրկարարներ» թիմը և գրավել առաջին տեղն ու ստացել գավաթ:

Ակադեմիայում անցկացվել է ուսանողական գիտաժողով:

Սկսվել է նոր համագործակցություն ակադեմիայի ուսանողների և Հայկական բժշկական ինստիտուտի ուսանողների միջև:

ՀԱՊԿ (Հավաքական Անվտանգության Պայմանագրի Կազմակերպություն) Տեղեկատվական Աջակցության Միջազգային Հասարակական Կենտրոնի ստեղծման 5-ամյակի շրջանակներում ֆիլմի ցուցադրություն, որը կազմակերպել էր ՀԱՊԿ Ինստիտուտի Հայաստանյան Ազգային Ներկայացուցչությունը, ակադեմիայի դահլիճում և մասնակցություն ՀԱՊԿ-ի ինստիտուտի կողմից կազմակերպած երկօրյա գիտաժողովին:

Ակադեմիայի 12 ուսանողներ մասնակցել են (ք. Մեղրի) Նռնաձոր և Կարճևան համայնքներում վտանգների քարտեզագրմանը, պատմական օրացույցի կազմմանը և վտանգների, խոցելիության ու կարողությունների գնահատմանն աղետների ռիսկի գնահատման նպատակով:

Ակադեմիայում իրականացվել են մի շարք միջոցառումներ, գրական քննարկումներ, «Ի՞նչ, որտե՞ղ, ե՞րբ» ինտելեկտուալ խաղ, արշավ դեպի Արա լեռ, Էքսկուրսիաներ դեպի թանգարաններ, կինոդիտում «Մոսկվա» կինոթատրոնում և այլն: Կազմակերպվել են շաբաթօրյակներ, ինչպես աշխատողների այնպես էլ ուսանողների մասնակցությամբ:

Ուսումնական գործընթացը կազմակերպվել է ժամանակակից տեխնիկական միջոցների կիրառությամբ: Բարելավվել է «Լուսակերտ» ուսումնական կենտրոնի տարածքը, ուսումնական գործընթացի շենքային (կաբինետ, լսարան և այլն) և վարժաիրապարակային պայմանները: Արժանի ուշադրություն է դարձվել տեղեկատվության աղբյուրների և գրադարանային ֆոնդի հարստացմանը: Ձեռք է

բերվել 15 անուն գիրք (150 գիրք), 6 անուն ամսագիր (36 ամսագիր), ակադեմիայի կողմից հրատարակվել է մեթոդական ու ուսումնական ձեռնարկներ: Չգալիորեն մեծացել է գրադարանից օգտվող ուսանողների և դասախոսների թիվը: Շրջանառվել է շուրջ 1600 միավոր գրականություն:

2013թ.-ին համալրվել է պրոֆեսորադասախոսական կազմը, ներկայումս այն ընդգրկում է շուրջ 40 գիտությունների թեկնածու և դոցենտ, 7 դոկտոր և պրոֆեսոր:

Տեղ գտած թերությունները.

Տեխնիկական հագեցվածության մեջ կան չլուծված խնդիրներ: Դրանք կապված են ՃԿԿ-ի ֆիզիկական մոդելի ստեղծման, ժամանակակից փրկարարական տեխնիկական միջոցների թարմացման և համալրման հետ:

Ուսումնական բազայի հետ կապված կան թերություններ: Դրանք պահանջում են ծխապատ տարածքում լաբորատոր պարապմունքների համար պայմանների ստեղծման, պարանային աշխատանքների համար սեփական վարժաիրապարակների ձևավորման, սպորտային հրապարակի բարելավման անհրաժեշտություն:

Ակադեմիայի փրկարարական ֆակուլտետի հակահրդեհային և փրկարարական ցիկլերում կա դասախոսական կազմով համալրման կարիք:

Մոտ ապագայում ակադեմիան նպատակ ունի`

- իրականացնել գործնական պարապմունքների համար վարժաիրապարակի վերակառուցման և վերազինման ծրագրերը: Այս ուղղությամբ առաջիկա տարում կտեղակայվեն ուղղաթիռն իրեն համապատասխան հարթակով, ինչը հնարավորություն կտա իրականացնել տուժածների օդային տարհանման վարժանքներ: Կտեղակայվեն երկու մետաղական աշտարակներ` 12-14 մետր բարձրությամբ, ինչը հնարավորություն կտա պարանային աշխատանքների գործնական ուսուցման: Կվերականգնվի ֆուտբոլի դաշտը, կտեղակայվի օդադեսանտային ուսուցման համար վարժաիրապարակը: ՃԿԿ-ի մոդելով նոր ուսումնական լսարանների հիմնում և գործարկում:
- աշխատանքներ տանել Հայաստանի Հանրապետության կառավարության կողմից հաստատված մասնագիտությունները դասիչներով և անվանումներով ««ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ազգային վարկանիշավորման համակարգ»-ի մեթոդաբանությունը, ցուցանիշները և հաշվարկի մեխանիզմները» փաստաթղթում ընդգրկելու համար, միաժամանակ կատարել ակադեմիայի մասնագիտությունների համապատասխանեցում ՅՈՒՆԵՍԿՕ-ի դասակարգչին, ըստ ոլորտների և ենթաոլորտների:
- ուսումնական գործընթացում շարունակել տեղեկատվական ժամանակակից տեխնոլոգիաների ներդրման գործընթացը:

- շարունակել ուսումնական գործընթացում իրավիճակային վերլուծությունների և կառավարչական խաղերի ներդրման աշխատանքները:

ՈՒԿՏՈՐ, Փ/Ծ ԳՆԴԱՊԵՏ

Յ. ՄԱԹԵՎՈՍՅԱՆ